

## Տեղեկանք

### Ռիսկի վրա հիմնված ստուգումների արդյունքների վերաբերյալ

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ստուգաթերթերով իրականացված ստուգումների արդյունքում, հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար 151 անձանց նկատմամբ կայացվել են վարչական տուգանքի ենթարկելու վերաբերյալ որոշումներ՝ 8 835 000 դրամ ընդհանուր գումարի չափով:

Ստուգումների ընթացքում հայտնաբերված հրդեհային անվտանգության նորմերի ու կանոնների առավել բնութագրական խախտումները հետևյալն են՝

-Տարհանման ճանապարհների պատերը և առաստաղները երեսապատված չեն չայրվող շինանյութով.

-Տարահանման ելքերի դռները չեն բացվում դեպի դուրս.

-Էլեկտրական սարքավորումները շահագործվում են անսարք վիճակում.

-Էլեկտրաբաշխիչ վահանակները կահավորված չեն գործարանային արտադրության ապահովիչներով.

-Հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների վրայով անցկացված են օդային էլեկտրահաղորդման գծեր.

-Ջեռուցման համար չեն օգտագործվում գործարանային արտադրության սարքեր.

-Հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով.

-Սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով.

-Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են անսարք վիճակում.

-Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին.

-Օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով.

-Արտադրական վտանգավոր օբյեկտում առկա չէ տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացությունը: